ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՔԱՋԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՔԱՋԱՐԱՆ 2023

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Քաջարան խոշորացված համայնքը կազմավորվել է 2017թ.՝ Քաջարան քաղաքային և Քաջարանց, Լեռնաձոր, Գեղի, Նոր Աստղաբերդ գյուղական համայնքների միավորմամբ: Համայնքի կենտրոնը Քաջարան քաղաքն է: Համայնքը ընդգրկում է 21 բնակավայր, որոնցից խոշորներն են՝ Քաջարան քաղաքը, Քաջարանց, Լեռնաձոր, Բաբիկավան, Գեղի գյուղերը: Բնակավայրերից 8-ը մշտական բնակչություն չունեն:

Վարչականորեն գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի հարավ- արևմտյան մասում: Կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25կմ է, Երևանից՝ 330կմ, Իրանի սահմանից՝ 50կմ: Սահմանակից է Կապան, Սիսիան, Տաթև, Մեղրի համայնքներին:

Աշխարհագրորեն համայնքը գտնվում է ՀՀ հարավ-արևմուտքում, Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումների, Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լեռնաբազուկների վրա: Տարածքն ընդգրկում է Ողջի գետի վերին ավազանը և Գեղի գետի ավազանն ամբողջությամբ: Ամենաբարձրադիր բնակավայրի բարձրությունը ծովի մակարդակից՝ 2050մ է, ամենացածրադիր բնակավայրինը՝ 1230 մ:

Համայնքի կենտրոն Քաջարան քաղաքը կառուցված է Ողջի գետի երկու բարձրադիր ափերին, բավականին նեղ աստիճանաձև սարավանդի վրա:

Հողերի ընդհանուր մակերեսը՝ 58,2 հազ հա, որից գյուղատնտեսական՝ 30,0 հազ հա (167 հա՝ վարելահող), անտառային՝ 8,7 հազ, 1,1 հազ՝ արդյունաբերական:

Աղյուսակ1. Վարչական տարածքի բնական պայմանները

Տարածքի մակերեսը	**57927 հա**
Բարձրությունը ծովի մակարդակից	**Առավելագույնը՝ 3904մ (Կապուտջուղ լ.) Նվազագույնը՝ 1200 մ**
Քաջարան քաղաքի բարձրությունը ծովի մակարդակից	**1750-1850մ**
Մակերևույթի մասնատվածությունը	**Հորիզոնական 1,0-1,5 կմ/կմ^2 Խորքային՝ 201-300մ (մասնատվածության հարաբերական բարձրությունը)**
Սելավավտանգավորությունը	**Կարգը՝ 1-ին կարգ Հաճախականությունը՝ ուժեղ Սելավաբերությունը՝ ուժեղ (15-35 մ^3/կմ^2) Տիպը՝ ցեխաքարային**
Սեյսմիկ շրջանացումը	**Գտնվում է 9 բալանոց ուժգնության գոտում**
Սողանքավտանգավորությունը	**Բարձր վտանգավորության գոտի է: Առկա են խոշոր սողանքային տարածքներ՝ մի քանի ակտիվ օջախներով:**
Լանջերի թեքությունները	

Քաջարան համայնքի կլիման բարեխառն լեռնային է. Ամառը՝ կարճատև ու զով, ձմեռը՝ ցուրտ և ձյունառատ:

Ձյունը տեղում է հիմնականում ձմռան երկրորդ կեսին, իսկ կայուն ձյունածածկը պահպանվում է մինչև ապրիլ:

Աղյուսակ 2. Համայնքի կլիմայական պայմանները

Օդի ջերմաստիճանը, °C	Միջինը՝ 7,2: Դիտված առավելագույնը՝ 33,6: Դիտված նվազագույնը՝ -21,5
Տեղումները	**550-850 մմ** 
Քամի	Միջին տարեկան արագությունը՝1մ/վրկ Առավելագույնը՝28մ/վրկ Միջին տարեկան առավելագույն՝ 5.5 մ/վրկ Ողողությունները՝ արևելյան(60%), արևմտյան (32%), անդորր՝ 50%

Աղյուսակ 3 Բնակչությունը ըստ բնակավայրերի

Հ/Հ	Բնակավայրը	Բնակչությունը
1	Ք. Քաջարան	6810
2	Լեռնաձոր	333
3	Փուխրուտ	12
4	Կաթնառատ	19
5	Բաբիկավան	215
6	Անոկավան	91
7	Ձագիկավան	53
8	Գեղի	119
9	Գեղավանք	3
10	Նոր Աստղաբերդ	37
11	Աջաբաջ	12
12	Գետիշեն	60
13	Գ. Քաջարանց	196
14	Հովշուտ	55
Ընդամենը		8015

2022թ նոյեմբերի 1-ի դրությամբ համայնքի մշտական բնակչությունը կազմել է 8015 մարդ, որից 6810-ը Քաջարան քաղաքի բնակչությունն է, 1205-ը՝ գյուղական: Աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության 55%-ը (մոտ 4400 մարդ), որից 20%-ը աշխատանք չունեն: Աշխատանք չունեցողների գերակշռող մասը կանայք են, քանի որ կանանց համար նախատեսված աշխատատեղերը քիչ են: Աշխատողների 75%-ը զբաղված են լեռնահանքային արդյունաբերությունում (ՀՊՄԿ ՓԲԸ աշխատակիցներն են), 10% -ը՝ մասնավոր այլ ձեռնարկություններում և գյուղատնտեսությամբ, 15%-ը՝ պետական և համայնքային կառույցներում:

Համայնքի սոցիալ - տնտեսական վերլուծություն

Համայնքի տարածքի տնտեսական յուրացման, արտադրա - տնտեսական համակարգի կազմակերպման որոշիչը աշխարհի խոշորագույն պղնձամոլիբդենային հանքավայրերից մեկի՝ Քաջարանի հանքավայրի առկայությունն է: Քաջարան քաղաքը հանրապետության լեռնահանքային արդյունաբերության խոշորագույն կենտրոնն է. այստեղ է գտնվում Քաջարանի պղինձ – մոլիբդենային հանքավայրը շահագործող Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Կոմբինատի վերջնական արտադրամքը պղնձի և մոլիբդենի խտանյութն է:

Համայնքի բյուջեի եկամտային մասի մոտ 50%-ը ձևավորվում է ԶՊՄԿ-ի կողմից կատարվող վճարումներից: Համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում ԶՊՄԿ-ն համայնքի բյուջեի 20%-ի չափով սոցիալական ներդրումներ է իրականացնում համայնքի զարգացման գործին:

Հանքավայրում առկա հանքաքարի պաշարները շահագործման ներկա ծավալների պահպանման դեպքում առնվազն 50 տարվա գործունեություն կապահովի ԶՊՄԿ-ի համար, ինչը դրական ազդեցություն կարող է ունենալ կազմակերպության և համայնքի զարգացման դինամիկայի վրա:

ԶՊՄԿ-ի կողմից աշխատակիցներին վճարվող աշխատավարձը անհամեմատ բարձր է համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից վճարվող աշխատավարձից, ինչը ընդհանուր առմամբ դրական լինելով հանդերձ որոշակի խոչնդոտներ է ստեղծում տնտեսության այլ ճյուղերի զարգացման համար. աշխատանք փնտրողները ձգտում են ԶՊՄԿ-ում աշխատանք գտնել (թեկուզ ոչ մասնագիտական), իսկ այլ ոլորտներում աշխատանք առաջարկողները չեն կարող համադրելի աշխատավարձ ապահովել:

Համայնքի տնտեսության միաբևեռ բնույթը բացասաբար է անդրադառնում աշխատաշուկայի որակական և մասնագիտական ցուցանիշների վրա. ոչ լեռնահանքային մասնագիտություն ունեցողները, հատկապես երիտասարդները, հեռանում են համայնքից իրենց ընտրած մասնագիտությամբ այլ համայնքներում աշխատանք գտնելու ակնկալությամբ:

ԶՊՄԿ-ին մատակարարումներ իրականացնող կամ ծառայություններ մատուցող կազմակերպություններ համայնքում քիչ կան. Այս հնարավորությունը քիչ է իրացված համայնքում և այս ուղղությամբ ուսումնասիրություններ ու աշխատանքներ կատարելու կարիք կա:

Տարածաշրջանում առկա հարուստ հանքային ռեսուրսները (պղնձամոլիբդենային, բազմամետաղային, ոսկու և այլն) համայքի տնտեսությունը երկար ժամանակաընթացքի համար կկողմնորոշեն դեպի լեռնահանքային արդյունաբերություն՝ սրանից բխող դրական և բացասական հետևանքներով:

Բացի Քաջարանի հանքավայրից, համայնքի տարածքում այլ հանքավայրեր ևս կան (ոսկու, պղինձ-մոլիբդենային, բնական շինանյութերի), որոնցից որոշների շահագործման համար թույլտվություններ են տրված տարբեր կազմակերպությունների:

Լեռնահանքային արդյունաբերությունից հետո տնտեսության մյուս համեմատաբար գործուն ճյուղը էներգետիկան է, շինարարությունը, հատկապես՝ արդյունաբերական, կապված հանքարդյունաբերության ընդլայնման հետ: Կան նաև բեռնափոխադրման, ավտոսպասարկման կազմակերպություններ:

Վերջին տարիներին 7 փոքր ՀԷԿ-եր են կառուցվել Գեղի և Ողջի գետերի և նրանց վտակների վրա:

Չնայած գյուղական բնակավայրերի առկայությանը, գյուղատնտեսությունը արտադրական նշանակություն չունի: Հողագործությունն ու այգեգործությունը դրսևորված են տնամերձ տնտեսություններով. Վարելահողերը կազմում են գյուղատնտեսական հողերի 0,4 % -ը (167 հա), որի միայն 40%-ն է մշակվում: Վերջին 20 տարում նվազել է անասնապահությունը: Գյուղատնտեսության անկման պատճառներից են հասարակական կացութաձևի փոփոխությունը, տնտեսության այլ ոլորտներում տղամարդկանց զբաղվածության բարձր մակարդակն ու բնակլիմայական պայմանները:

Աղյուսակ 4 Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը

	Բնակավայրի անվանումը	Գյուղ. Նշանակ-ն հողեր /հա/	Վարելահող /հա/	Խոտհարք /հա/	Արոտ /հա/	Բազմամյա տնկարկ /հա/	որից փաստացի ոռոգվող			
							Վարելահող /հա/	Խոտհարք /հա/	Արոտ /հա/	Բազմամյա տնկարկ /հա/
1	Քաջարան	619.09	21.51	9.38	588.2		20.4			
2	Գեղի	6,964,58	38.8	153.2	6772.58		38.72	84.03		
3	Նոր Աստղաբերդ	5,160,4	6.83	51.9	5101.68		3.4			
4	Քաջարանց	1,426,43	33.88	157.57	1234.98		21			
5	Լեռնաձոր	3,654,02	66.31	293.66	3294.05		50.3			

Աղյուսակ 5 Համայնքում առկա անասնագլխաքանակը, 2022թ

	Խ.Ե.Ա	Որից կով	Մ.Ե.Ա	Որից մաքի	մեղու	թռչուն	Ձի	Խոզ
Քաջարան	10	6	0	0	135	300	0	0
Քաջարանց գյուղ	52	31	800	650	332	170	14	0
Նոր Աստղաբերդ	46	29	63	31	232	57	3	19
Գեղի	95	56	600	300	142	179	11	17
Լեռնաձոր	65	25	567	360	512	328	2	283

Ցանվում է 60 հա կարտոֆիլ, 15 հա լոբի, 6 հա բանջարեղեն: Այգիներ՝ 60 հա:

Համայնքում գործող երեք նախադպրոցական հաստատություններից մեկն է համայնքային: Մյուս երկուսը ՀՊՄԿ ՓԲԸ ենթակայության են: Սաների թիվը՝ 305: Համայնքային ենթակայության է նաև արվեստի դպրոցը: Արհեստագործական ուսումնարանն ու մանկապատանեկան մարզադպրոցը հանրապետական ենթակայության են:

Համայնքում գործում են նաև յոթ հանրակրթական դպրոցներ, որոնցից 5-ը միջնակարգ, 2-ը՝ հիմնական: Աշակերտների թիվը՝ 1150:

Համայնքի 4 բնակավայրերում գործում են հանրային գրադարաններ:

Քաջարան քաղաքում առկա մշակույթի պալատը ՀՊՄԿ ՓԲԸ ենթակայության է:

Քաջարանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային, պոլիկլինիկական և շտապ օգնության ծառայությունները 2014թ միավորվել են մեկ՝ վերանորոգված և վերազինված պոլիկլինիկայի մասնաշենքում: Համայնքի բնակավայրերում գործում են բժշկական կետեր:

Խմելու ջրի մատակարարման, կոյուղու ծառայությունները իրականացնում է «Քաջարանի համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ն: Ջրամատակարարման և կոյուղու համակարգերը համայնքային սեփականություն են: Գազի բաշխման ներհամայնքային ցանցը ևս համայնքային սեփականություն է, որը տրված է Գազպրոմ-Արմենիա կազմակերպությանը անհատույց շահագործման: Համայնքի 14 բնակավայր գազաֆիկացված չէ:

Համայնքում գործում են երեք բանկերի մասնաճյուղեր՝ ԱՇԲ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱՄԵՐԻԱԲԱՆԿ:

Կապի ծառայություններ մատուցող կազմակերպություններից Քաջարանում գործում են Վիվասելի, Ռոստելեկոմի, Թիմ տելեկոմի, Հայփոստի մասնաճյուղերը, տեղական կաբելային հեռուստատեսություն: Կան գրանցված երկու տաքսի ծառայության կազմակերպություններ:

Համայնքում առկա է երեք հյուրանոց, որոնցից մեկը պատկանում է ԶՊՄԿ ՓԲԸ-ին և սպասարկում է հիմնականում ԶՊՄԿ ՓԲԸ կարիքները: Մեկը բացվել է 2019թ., Անդոկավան բնակավայրում:

Հանրային սննդի 12 օբյեկտներից չորսը ռեստորաններ են, մյուսները՝ արագ սննդի կետեր:

Համայնքում գործում է 115 մանրածախ առևտրի և 15 կենցաղսպասարկման կետեր, որոնցում զբաղվածների թիվը կազմում է մոտ 200 մարդ:

Ընդհանուր առմամբ համայնքում առկա են երկու խոշոր, 5 միջին, 8 փոքր և 135 միկրո ձեռնարկություններ:

Չնայած խոշոր հանքավայրի առկայությանը, համայնքը էկոհամակարգային ծառայությունների մատուցման (ալպիական մարգագետիններ, բնական գեղատեսիլ լանդշաֆտներ, հարուստ կենսաբազմազանություն, բարձրլեռնային լճեր, «Զանգեզուր արգելավայր» և այլն) և տարանցիկ պատմամշակութային տուրիզմի զարգացման մեծ պոտենցիալ ունի, ինչը, սակայն, համայնքում իրացված չէ:

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1. Հարուստ օգտակար հանածոների պաշարները՝ հատկապես պղնձամոլիբդենային 2. Բարձր արժեք ներկայացնող բնական լանդշաֆտների և հարուստ անտառային կենսաբազմազանության առկայությունը 3. Ալպիական արոտավայրերի և խոտհարքների առկայությունը 4. Պատմական հուշարձանների առկայությունը 5. Խոշոր արդյունաբերական ձեռնարկության առկայությունը, որը նաև համայնքի ամենախոշոր գործատուն է 6. Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համեմատաբար մեծ ներկայացվածությունը 7. Բնակչության եկամուտների համեմատաբար բարձր մակարդակ 8. Համայնքապետարանի՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության դրական փորձն ու ունակությունները, հատկապես, համայնք- ԶՊՄԿ փոխշահավետ համագործակցություն 9. Մեկ պատուհանի սկզբունքով աշխատող քաղաքացիների սպասարկման գրասենյակ	1. Համայնքի գլխավոր հատակագծի բացակայությունը 2. Համայնքի տնտեսության միաբևեռ բնույթը՝ պայմանավորված տնտեսության մեջ մեկ խոշոր ձեռնարկության գերակա դիրքով 3. Փոքր և միջին բիզնեսի թույլ ներկայացվածությունը 4. Բնակիչների հասարակական ցածր ակտիվությունը 5. Երիտասարդների բազմակողմանի զբաղվածության և ժամանցային վայրերի բացակայությունը 6. Ինժեներական ենթակառուցվածքների և հիմնական ֆոնդերի մաշվածությունը 8.Համայնքային կենտրոնի էկոլոգիական համեմատաբար անբարենպաստ վիճակը 9. Գյուղական բնակավայրերի թերբնակվածությունը 10. Եղանակային անբարենպաստ պայմանները 11. Ռելիեֆի կտրտվածությունը և վարելահողերի փոքր չափերը
Հնարավորություններ	**Վտանգներ/սպառնալիքներ**
1. Մեղրիում ձևավորվող ազատ տնտեսական գոտու մոտիկությունը 2. Հարկային արտոնությունների առկայությունը՝ որպես սահմանամերձ և բարձրլեռնային համայնք 3. Տարածաշրջանին առնչվող պետական խոշոր ծրագրերի առկայությունը (Հյուսիս – հարավ մայրուղու կառուցում, պոչամբարներում կուտակված պոչանքների վերամշակման ծրագիր) 4. Արդյունաբերական պոտենցիալի բազայի օգտագործում նորարարական արտադրությունների հիմնելու համար 5. Արդյունաբերական բազայի օգտագործում ձեռնարկությանը մատակարարող կամ ծառայություններ առաջարկող փոքր ձեռնարկությունների հիմնման համար	1. Համայնքի տնտեսության միաբևեռությունը 2. Լեռնահանքային ձեռնարկությունների գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա 3. Բնական աղետների և էկոլոգիական ռիսկերի բարձր մակարդակը. 4. Համայնքաստեղծ ձեռնարկության փակվելը կամ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելը 5. Օրենքների հաճախակի փոփոխությունները 6. ՏԻՄ լիազորությունների անբավարարությունը խնդիրների լուծման համար

Համայնքի տեսլականը՝

Քաջարանը բնության վրա նվազագույն բացասական ազդեցություն ունեցող, բարձր տեխնոլոգիական հանքարդյունաբերություն, զարգացող փոքր և միջին ձեռնարկություններ, էկոհամակարգային ծառայություններ մատուցող բազմաբնակավայր համայնք է, որտեղ մարդիկ կարող են գտնել արժանապատիվ աշխատանք և զբաղմունք, ապրում են հարմարավետ և առողջության համար անվտանգ բնակավայրերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

✓ **Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.**

Ապահովել համայնքի նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Կառուցել նոր մանկապարտեզ, Հիմնանորոգել Լեռնաձոր գյուղի մանկապարտեզը, ստեղծել հնարավորություններ՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

Շարունակել նախադպրոցական կրթության որակի բարելավումը՝ վերապատրաստումներ, մասնագիտական փորձի փոխանակումներ կազմակերպելու միջոցով, սահմանելով դաստիարակի որակավորման տարակարգերի չափորոշիչներ:

Շարունակել արտադպրոցական կրթության որակի բարելավումը հաստատություններում՝ պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդների կիրառման, վերապատրաստումների, փորձի փոխանակման ծրագրերի, որակավորման տարակարգերի չափորոշիչներ սահմանելու և բարձր առաջադիմություն ունեցող լավագույն սաներին՝ բարձրագույն մասնագիտական նպատակային կրթություն ստանալուն աջակցելու միջոցով:

✓ **Համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.**

Սպորտի և առողջ ապրելակերպի խթանման նպատակով կառուցել նոր սպորտային համալիր՝ լողավազանով, հիմնանորոգել քաղաքի մարզադաշտը, հիմնանորոգել և վերազինել քաղաքի և գյուղական բնակավայրերի մարզահրապարակները, խաղադաշտերը, տեղադրել մարզասարքեր, աջակցել համայնքում գործող մանկապատանեկան մարզադպրոցին, տարբեր մարզաձևերից մրցաշարեր կազմակերպել, աջակցել համայնքում տարբեր մարզաձևերից մարզային, հանրապետական և միջազգային նշանակության մրցաշարերի կազմակերպմանը:

✓ **Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.**

Համայնքում երիտասարդության ակտիվության բարձրացման և պահպանման նպատակով ապահովել երիտասարդության ռազմավարական ծրագրերի հետևողական իրականացումը, համայնքի կառավարման և որոշումների կայացման հարցում երիտասարդների ակտիվ մասնակցության խթանումը, երիտասարդական փառատոնների կազմակերպումը և հավաքների կազմակերպման աջակցությունը՝ հանրապետության տարբեր մարզերի երիտասարդների մասնակցությամբ, երիտասարդական ակումբների (հայրենասիրական, մարզական, ինտելեկտուալ) հիմնումը (հիմնման աջակցությունը), մարզական և մշակութային միջոցառումներին երիտասարդ ընտանիքների մասնակցության խթանումը:

✓ **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը (տեղական սոցիալական ծրագիր).**

Ապահովել բնակիչների ավելի բարեկեցիկ կյանքը խոցելի ընտանիքների հասցեական և թիրախավորված աջակցության, համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով առավել խոցելի ընտանիքների կարիքներին արձագանքման, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման (գյուղական համայնքերում անասնապահություն, ջերմոցային տնտեսությունների ստեղծում, մասնագիտական կարողությունների զարգացում), հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հնարավորության և սոցիալ հոգեբանական ծառայությունների ընդլայնման, հատուկ կարիքներով մեծահասակների ցերեկային խնամքի ծառայությունների ստեղծման (ստեղծման աջակցության), սոցիալական ոլորտի գործընկերների հետ համատեղ սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման, համայնքային մակարդակում երեխաների պաշտպանության ցանցի հիմնման և կանոնավոր գործունեության ապահովման, երեխաների ամառային ճամբարի հիմնման միջոցով:

✓ **Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանումը.**

Ապահովել գյուղատնտեսության զարգացումը ոռոգման և խմելու ջրերի հին համակարգերի հիմնանորոգման, գյուղերում ենթակառուցվածքների զարգացման, ավանդական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման աջակցության և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ գյուղատնտեսության զարգացման՝ փոքր և միջին □խելացի□ անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման, տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների ստեղծման և փոքր, միջին ու մեծ ջերմոցների ստեղծման միջոցով:

✓ **Համայնքում զբոսաշրջության զարգացման խթանումը.**

Ապահովել զբոսաշրջության զարգացումը՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման աջակցության, գյուղերը զբոսաշրջային տեսանկյունից ավելի գրավիչ դարձնելու, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ստեղծման, պատմամշակութային հուշարձանների պահպանության աջակցության նպատակով շահագրգիռ կողմերի հետ համագործակցության, զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատների հետ համագործակցության միջոցով:

✓ **Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործում, համայնքային գույքի կառավարումը.**

1. Ընդլայնել քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը:
2. Ստեղծել կյանքի և կենսագործունեության համար բարենպաստ,հաճելի, ներառական պայմաններով քաղաքային միջավայր
3. Ընդլայնել կոմունալ և կենցաղային ծառայությունների շրջանակն ու ծավալները, բարելավել դրանց որակը:
4. Խաղահրապարակները դարձնել ցանկալի հանգստի, ժամանցի, զբաղվածության վայրեր քաղաքի երեխաների համար
5. Համայնքի պուրակներն ու զբոսայգիները դարձնել ցանկալի հանգստի վայրեր բնակչության համար:
6. Նպաստել համատիրության գործունեության արդյունավետության բարձրացմանը

7. Ներհամայնքային ճանապարհներն ու բնակավայրերի փողոցները հիմնանորոգել և բարեկարգել, դարձնել երթևեկության համար անվտանգ, արդիականացնել համայնքի ինժեներական ենթակառուցվածքները

✓ **Պետության պաշտպանության իարականացման աջակցումը, աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.**

Համայնքի առաջնային խնդիրներից են անվտանգությունը, քաղաքացիական պաշտպանությունը, աղետների ռիսկերի կառավարումը:

Նախատեսվում է՝

Բարձրացնել քաղաքացիական պաշտպանության արդյունավետությունը և ապահովել բնակչության լիարժեք պատսպարումը, արդիականացնելով քաղաքացիական պաշտպանության ինժեներական, վթարավերականգնողական ծառայությունները և վերազինելով անհրաժեշտ տեխնիկայով և սարքավորումներով, կառուցելով նոր ապաստարաններ, նորոգելով բազմաբնակարան շենքերի նկուղները, բոլոր սահմանամերձ գյուղերում կառուցելով պարզագույն թաքստոցներ, արդիականացնելով և վերազինելով քաղաքացիական պաշտպանության ծառայությունները:

Ապահովել համայնքի բնակչության անվտանգությունը և անհրաժեշտության դեպքում արձագանքել սահմանային միջադեպերին՝ արագ արձագանքման խմբեր ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերին՝ համայնքի սահմանամերձ բնակավայրերում պաշտպանությանն ուղղված ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքներում աջակցելու, սահմանների կահավորման ու ճանապարհների կառուցման գործում Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի հետ համագործակցելու, Կապան համայնքի ելքերում և մուտքերում տեսահսկման համակարգեր տեղադրելու միջոցով:

Ապահովել աղետների ռիսկերի արդյունավետ կառավարումն՝ հանքարդյունաբերական ձեռնարկությունների հետ համագործակցությամբ ուսումնասիրելով կոնսերվացված և գործող պոչամբարների ու ապարային թափոնակույտերի և Գեղիի ջրամբարի տեխնիկական վիճակը, շարունակելով գետերի և սելավատարների մաքրման աշխատանքները, ամրացնելով և վերականգնելով Ողջի գետերի վնասված հենապատերը, ուսումնասիրելով Քաջարան համայնքի սողանքային գոտիները, ստեղծելով տեղեկատվական բազա և իրականացնելով կանխարգելիչ միջոցառումներ, բնական աղետների դեպքում աջակցելով Սյունիքի մարզի փրկարարական վարչությանը որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնելու գործում:

✓ **Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.**

Բարելավել գործարար միջավայրը և խթանել ձեռնարկատիրությունը գործարարների համար գրավիչ և վստահելի ներդրումային միջավայր ստեղծելու միջոցով:

✓ **Համայնքում բնակարանային շինարարության խթանումը.**

Խթանել բնակարանային շինարարությունը համայնքում համագործակցելով կառուցապատողների հետ:

✓ **Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը, ներառյալ համայնքում էկոլոգիական կրթության և դաստիարակության խթանումը.**

Ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը՝ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում:

✓ **Բարեգործության խթանումը համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով.**

Խթանել բարեգործությունը՝ համագործակցելով բարերարների հետ, ստեղծելով գործընկերային հարաբերություններ: